

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

(Օտարաբարբաջիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Миръ“

ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Կայի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՍԻՅԻՒՆ

Շատ ուղիղ նկատողութիւն:— Եւրոպիոն տե-
սութիւնը Նամակ Մասկովայից: Նամակ Երևա-
նից: Նամակ խմբագրից: Ներքին լուրեր— Արա-
քի տե սոսեթիւն: Յրամսիա: Նամակ Թիւր-
քիայից: Արտաքին լուրեր:— Խառն լուրեր:—
«Մշակի» հեռագիրներ:— Յայտարարութիւններ:—
Տեղեկացոյց:

ՇԱՏ ՈՒՂԻՂ ՆԿԱՏՈՂՈՒ- ԹԻՒՆ

Ինչպէս յայտնի է, Ռուսաս-
տանի եւրոպական մասում արդէն
վաղուց է որ, բացի բաղաբային
ինքնավարութենից, մտցրած է և
նահանգական ինքնավարութիւնը
(30MCTBO):

Յայտնի է նոյնպէս որ Լնդոն-
կովկասի գլխաւոր քաղաքներում
տէրութիւնը քանի մի տարի է
որ մտցրել է բաղաբային ինքնա-
վարութիւն, բայց նահանգական
ինքնավարութիւն դեռ ևս մտցրած
չէ մեր երկրում:

Կորեերում թիֆլիսի նահանգի
ազնւականները գումարովելով մի
քանի խնդիրներ վճռելու և ընտ-
րութիւններ անելու համար, վրձ-
ուեցին ուրիշ հարցերի թուով
խնդրել բարձրագոյն կառավարու-
թիւնը թոյլ տալ բացառապէս
կովկասեան բնակական դպրոցների
մէջ աւարտած երիտասարդներին
մտնել համալսարանների ֆիզիկո-
մաթեմատիկական և բժշկական
ֆակուլտետները: Եւր վճիռը կա-
յացաւ պ. Սուխանովի առա-
ջարկութեան հիման վրա, որ հաս-
տատեց իր ասածները ներկայաց-
նելով ազնւականների ժողովին
«Մշակի» այդ մասին գրած ա-
ռաջնորդող յօդաւածների թարգ-
մանութեան բովանդակութիւնը:

Ռուս «Тифл. Вѣстн.» լրագիրը,
յիշելով այդ վճիռը և համակրե-
լով նրան, մի և նոյն ժամանակ
շատ ուղիղ է նկատում որ թիֆ-
լիսեան նահանգի ազնւականների
ժողովը կարող էր և մի ուրիշ
նոյնքան նշանաւոր խնդրի մասին
խօսք բանալ: Ռուս լրագրի կար-
ծիքով ժամանակ էր արդէն Լն-
դոնկովկասում նահանգական ինք-
նավարութիւն մտցնելու մասին
հարց բարձրացնել և ազնւական-
ների ժողովի պարտաւորութիւնն

էր այդ մասին տէրութեանը ա-
մենախոնարհ խնդրագիր ներկա-
յացնելու:

Շատ ուղիղ ենք գտնում «Тифл.
Вѣстн.» լրագրի նկատողութիւնը
և կատարելապէս համակրում ենք
նրան:

Եւր արդէն ուշ է այդ խն-
դիրը բարձրացնելու, որովհետեւ
ազնւականների ժողովը կարող է,
օրէնքով, խնդիրներ յարուցանել
միայն ընտրութիւններից առաջ,
բայց երբ արդէն սկսվել են ընտ-
րութիւնները, այլ ևս ոչ մի նոր
հարցի մասին վիճաբանութիւնը
չէ կարող տեղի ունենալ ժողովի
մէջ:

Ուրեմն դժբաղդապէս պէտք է
սպասել մինչև որ մեր ազնւական-
ները մի ուրիշ անգամ կը գո-
մարվեն:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՆ

Մայիսի 1-ին 79.

Արդէն ձեզ յայտնի է այն սրտաւառ և աղէտալի
լուրը, որ անպատմի և անմխիթարելի վիշտ պատ-
ճառեց ամենայն մի ճամբորտ հայի սրտին: Մեր
հանձարեղ հրատարակախօսի և գիտնական պրո-
ֆէսորի մահը այնպէս յանկարծաւ, այնպէս
անակնկալ էր, որ մինչև անգամ նրա մտերիմ բա-
րեկամները ևս միջոց չուներին նրան գտնել մի
խօսք անելու, լսելու նրանից գտնել մի բառ, գտնել
հանգիստ կերպով կախուցանելու այս բազմաբախտ
մարդու աչքերը... Գաւալի է և շատ ցուալիլ թէ
օրքան մեծ է մեր կորուստը՝ կորուստը ազգի և
գրականութեան, դրա մասին ևս անարտաշած եմ
համարում խօսել այս սանձամաւորած հանդիսի մէջ,
— մի նարուստ նիւթ, որ կարօտ էր աւելի երկար
ժամանակի և աւելի մեծ աշխատութեան. մանա-
ւանդ որ հանգուցեալ Ս. Կազարեանը վաղուց
արդէն ծանօթ է հայ նասարակութեանը իւր ար-
դիւարեւոր գործունէութեամբ: Ուրեմն այսոց թող-
նելով հանդուցեալի լիովին կենսագրութիւնը և այն
ազդեցութիւնը, որ ունեցաւ նա ազգի և գրականու-
թեան վրա, ևս մի քանի համառօտ տեղեկութիւն
կը տամ ձեզ նորա կեանքի մասին, որ կարծեմ,
շատ կարեւոր է:

Ստեփաննոս Կազարեանը ծնած է Հայաստանի
Խոյ քաղաքում 1812 թ.: Գեռ նրա մանկութեան
ժամանակ նրա բարեկաշտ հայր՝ Տէր-Կասիք քանա-
նան, թողնում է իր մայրենի երկիրը և իր ըն-
տանիցով վերաբնակում է Արաստանի մայրաքա-
ղաքը՝ Թիֆլիս: Այստեղ մանուկ Ստեփաննոսը մրտ-
նում է «Խօսք» անունակալ դպրոցը և ուսում է
առնում Պողոս վարդապետի մօտ այլ վախճանի
չափ մանուկների հետ, որոնց մէջ էր և երջանկա-
լիշատակ Խաչատուր Աբովեանը: 1823 թ. բաց-
վում է Ներսիսեան դպրոցը. «Խօսք» անունակալ
ուսումնարանի աշակերտներից շատերը, որոնց մէջ
և Կազարեանը, տեղափոխվում են այստեղ, թող-

նելով իրանց Պողոս վարդապետին և անցնելով
Բարսեղիւն Արամբարեանի մօտ: Կազարեանը մը-
նում է այստեղ մինչև 1829 թ.:— այն տարին, երբ
Խ. Աբովեանը, թողնելով Ներսիսեան դպրոցը և
գնալով Լեյֆլադին, ստատւում է երեկի եւրոպայի
ճանապարհորդ Պարոտին և սորա հետ միասին
համուսն է Գորգատ ուսում առնելու նպատակով:
Այս դէպքը մի բարի նախանձ զրգուեց երկուս-
տար Կազարեանի մէջ և նա 1830 թ. օժանդա-
կութեամբ իր Մարտիրոս երէց եղբոր, թողնում է
Թիֆլիսը և դիմում է նոյնպէս Գորգատ յաղեցնե-
լու իր ուսման ծարաւը եւրոպական ճոխ գիտու-
թիւնների (*): 1840 թ. նա աւարտում է իր ուս-
ման ընթացքը Գորգատի հասնարանում իբրև
կանդիդատ փիլիսոփայական գիտութիւնների և
1842 թ. նշանակվում է ասիլիանտո հայկական կա-
թեդրայի Վաղանու կայսերական հասնարանի մէջ:
Չը բաւականանալով միայն հայկական գրականու-
թեանը, նա սկսում է պարապել պարսից և արա-
բացոյց գրականութիւններով և 1849 թ. նշանակ-
վում է դոկտոր-պրոֆէսոր այդ երկու առարկա-
ների: Մի և նոյն թիւին կայսերական հրամանա-
ւա փոխադրվում է Մոսկվայի Կազարեան ճեմա-
րանը իբրև պրոֆէսոր պարսից և արաբացոյց գր-
ականութիւնների և գլխաւոր ուսուցիչ լատինա-
կան լեզուի: Բացի այս առարկաներից նա ունէր
այստեղ դաստիարակութիւններ, որոնց իր աշակերտ-
ներից զատ, լուս էին և բոլոր Մոսկվայի բարձր
ուսումնարաններում գտնված կովկասցի ուսանող-
ները— մի գեղեցիկ գործ, որի համար նա արժա-
նանում է կայսեր կողմից առանձին շնորհաց և
դրամական փարձատրութեան: Այս իսկ միջոցին է
վերաբերում նրա ժողովան գործունէութիւնը ազ-
գային գրականութեան ասպարիզի վրա: Կա ան-
զաղար հրատարակում է զանազան զրգեր. այրե-
նարան երեխացոյց համար, մի քանի ընտիր հեղինա-
կութիւններ հոգևորական դասի համար: Նոյնպէս
նա աշխատում է մշակել աշխարհաբար և կազ-
մել մի դիւրին և մարտիկ բարբառ. և անա լոյս է
տեսնում նրա երկհատոր գեղեցիկաշիւս «Հանդէս
նոր Հայաստանի համար»: Եւրօպացի երեկմ հեղի-
նակները ևս անուշադիր չը մնացին նրա կողմից.
Նա ձեռք է զարկում զանազան ընտիր թարգմա-
նութիւնների, որոնց մէջ նշանաւոր է Բեռնարդէն
զը Սէն Պիերի «Փառչուս և վերջնիման» և մի քանի
հեղինակութիւններ գերեմանական գրականութեանց:
1858 թ. նա հանդէս է դուրս գալիս իր «Էլիւսի-
ստիայով», որ 7 տարի պաժառ լուսաւորում է
Հայաստանի մտաւորական մեայ հօրից, արժա-
ւեղով անմխի առողջ մտքեր, լուրջ գաղափարներ,
բարձր և ազնիւ ձգտումներ և նպատակներ...
1865 թ. դադարում է Հիւսիսայայի հրատա-
րակութիւնը: 1869 թ. Ներսիսեան դպրոցի հրա-
ւիրմամբ Կազարեանը թողնում է Կազարեան ճե-
մարանը և տեղափոխվում է Թիֆլիս յիշեալ դպրոցի
տեսչութեան պաշտօնը վարելու նպատակաւ: Բայց
այստեղ նա երկար չը մնաց. մի զիտաւորութիւն,
որ նա կամեւում էր իրագործել Թիֆլիսում, չը յա-
ջողուցաւ: Այս և ուրիշ մի քանի պատճառներով
նա թողնում է Թիֆլիսը (1871 թ.), վերադա-
նում է կրկին Մոսկվայի Կազարեան լիկէոնը իբրև
պրոֆէսոր պարսից գրականութեան և շարունա-
կում է վարել այս պաշտօնը մինչև իր մահը— 1879
թ., 26 ապրիլի Թիֆլիսում չը յաջողած ձեռնար-
կութիւնը չէ վատնելում հանգուցելուն և նա
կրկին փորձ է փորձում Մոսկվայում իրագործել իր
վաղ ժամանակից գանկացած միտքը— շարունակել
«Հիւսիսայայի» հրատարակութիւնը մի նոր վերնա-
դրով: Բայց փառս, որ մի քանի տխուր պատճառ-
ներ արդիւր են լինում հանգուցելուն գլուխ բերել
իր աղիւր զիտաւորութիւնը և պապէս մաշված և
վտայած սրտով նա զերեղեման է մտնում, ասե-
նելով իր հետ իր եւսանող, անհուն սերը և չի-
րագործված իղէպները...

* Հանգուցեալ Կազարեանի Թիֆլիս թողնելու
և Գորգատ գնալու մասին մի քանի բազմազան
կարծիքներ կան: Եւ մէջ բերի միայն մէկը, աչքի
առաջ ունենլով, որ այստեղ հարցը պարզելու ոչ
տեղն է և ոչ ժամանակը:

«Ախտոս, հազար փառս, ասում էր վերջին ժա-
մանակներս հանգուցեալը, որ բոլոր իմ իղէպներս
սլոտի քայքայվին, փրտտակ լինեն...»

Ս. Կազարեանը վախճանեցաւ 67 տարեկան:
Իր բաղանջան կեանքի ընթացքում նա շատ ան-
գամ իր վրա է դարձրել տէրութեան ուշադրու-
թիւնը և արժանացել է շատ պարգևների և չքա-
նչանների: Վերջին ժամանակներս նա ստանում է
ներգործական խորհրդականի բարձր աստիճանը
(Дѣйствиельный статскій совѣтникъ) և իր բազ-
մամայ վաստակաւոր ծառայութեան համար մի
նշանաւոր թոշակ (пенсія):

Հաղորդելով ձեզ մի քանի համառօտ տեղեկու-
թիւններ հանգուցեալ Ս. Կազարեանի մասին, ևս
աւելորդ չեմ համարում մի քանի խօսք ևս ասել
նրա թարման վրա, որ շատ փառաւոր էր և որի
նմանը Մոսկվայի հայ եկեղեցական պատմութիւնը
դեռ չէ ունեցել:

Արդէն ժամը 10-ից (28 ապրիլի) ժողովուրդը
խուռն բազմութեամբ դիմում էր հայոց եկեղեցին,
ուր մի օր առաջ բերած դրած էր Կազարեանցի
դագաղը— զարգարված գեղեցիկ պատկերով և
զոյնողոյն ծաղիկներով: Բազմութիւնը այնքան մեծ
էր, որ եկեղեցում տեղ չը կար կանգնելու: Այս-
տեղ կային Կազարեան լիկէոնի և ճեմարանի բոլոր
պրոֆէսորները և ուսուցիչները իրանց նշանա-
զգեստներով. սոցա շարքում կանգնած էր նոյնպէս
Մոսկվայի նահանգի ուսումնական հոգաբարձու-
իշխան Մեյչիկովսկի, որ եկած էր պատարագի սկզ-
բից և յետոյ մասնակից եղաւ յուղարկաւորութեան
հանդիսին. դագաղի շորս կողմը կանգնած էին
չաւ հայ տիկնայք և օրիորդներ, մի ամբողջ խումբ
հայ և առաւ ուսանողաց, Կազարեան ճեմարանի
բոլոր աշակերտները և մեծ բազմութիւն ժողովրդի:
Պատարագից յետոյ, որ շատ փառաւոր կատար-
վեցաւ, սկսվեցան ճառերը. երկու հատ կար-
դացվեցան հոգևորականների կողմից, մի երկար
ճառ խօսեց (ուսուցիչ լիկէոն) Մոսկվայի գեր-
մանական եկեղեցու պատարագ, որ հանգուցեալը
բարեկամներից մէկն է. մէկ մէկ ճառ կարդացին՝
մի առաւ ուսանող Կազարեան լիկէոնի և մի հայ
ուսանող համալսարանի:

Մրանց մէջ մանաւանդ գեղեցիկ խօսեց արժ.
հայր Սուրենեանցը, որ պէտք է ասել ընտիր քա-
րողիչ է:

Հառախօսութիւններից յետոյ ամենքը մօտեցան
հրժարական համայնք տալու հանգուցեալ հոգեղէն
նշխարքին. այնուհետև ուսանողները բարձրացրին
իրանց ուսերի վրա դագաղը և դուրս տարան: Մի
հիմաւոյ տեսարան էր կազմում այս յուղարկաւոր-
ութեան հանդէսը, երբ որ հանդիսականները մտան
Մոսկվայի ամենանշանաւոր փողոցներից մէկի մէջ:
Առաջից զոյգ զոյգ դնում էին Կազարեան ճե-
մարանի բոլոր աշակերտները, նրանցից յե-
տոյ 10 աշակերտ ստանում էին հանգուցեալ Կա-
զարեանի շքանշանները փառաւոր բարձրի վրա
և մի քանի ծաղկազարդ պատկեր բազմազոյն ժա-
պաւններով զարդարած. այնուհետև դնում էին
հոգևորականները եկեղեցական բոլոր պարագանե-
րով. և սրանց անմիջապէս հետեւում էր մի մեծ
խումբ երիտասարդների, ուսանողների և աշա-
կերտների, որոնք փոխ առ փոխ տանում էին դա-
գաղը դէպի հանգուցեալ, չը նայելով, որ վերջինն
8 վերտուր չափ հեռու է հայոց եկեղեցուց— մի
պատիւ, որին մինչև այսօր Մոսկվայում ոչ մի
հայ չէ արժանացել: Դագաղի յետեւից դնում էին
հանգուցեալի բարեկամները, շատ կանայք և ժողո-
վուրդը. իսկ ամենից վերջը մի երկար շղթայած
չարք կառքերի, որոնց երկու կողմից գնում էին
հեծերազօր ժանդարմներ կարգապահութեան համար:
Այսպէս փառաւոր կերպով յուղարկաւորութեան
հանդէսը հասաւ մինչև հանգուցեալ: Մի կարճ
պաշտօնից յետոյ Կազարեան ճեմարանի աշակերտ-
ներից մէկը խօսեց մի ճառ և ապա կատարվեցաւ
թաղման հանդէսը: Այնուհետև այստեղ իսկ հան-
գուցեալ Կազարեանցի գերեզմանի վրա, հայ ու-
սանողների խնդրանք կատարվեցաւ հոգեհանգիստ
երջանկայիտաակ յոյսատուր Աբովեանի և Միքա-
էլ Կալանդեանի, որոնք հանգուցեալը ընկերներն
էին և մտերիմ բարեկամները:

Վերջը, տեղիս երեցիտանս պ. Գաննանցի հրապարակած, որ Նազարեանցի մտերիմ բարեկամն ընդ մէկն է և որ այսօր յանձն էր առել ստորինն թաղման հանդէսը, հանդիսականները զիմեցին զէպի սեղանատունս: Աս մի զանգն է, որի պատկերից, բայցի ճայ թագաւորներն և կաթողիկոսներն պատկերներն, կախ էր արած այդ օրը հանդուցեալ Նազարեանցի մեծազոր պատկերը՝ չըջտաւած ծաղիկայ պատկով*):

Մի պարզ և համեստ ճակերտքով վերջացաւ այս փառաւոր յուրաբարութեան հանդէսը:

Արժ մ այստեղ լուր է տարածվել, որ մօտ ժամանակներս ստորագրութիւն պիտի բացվի Մօսկայում Նազարեանցի վրա մի շքեղ մահարձան կանգնեցնելու համար. իսկ ուսանողութեան մէջ խօսք կայ մի ստիպելոյս հիմնել Նազարեանցի անունով Մօսկայի համալսարանի մէջ:

Չենք կասկածում, որ մեր կողմաւորակ եղբայրները չը համարէին այս անելը առաջարկութիւններն. լիպոյս ենք որ նրանք ևս արժանաւորակն կը լցոցանեն իրանց պարտքը զէպի այնպիսի մի մեծ և արդիւնաւոր անձն, որի նմանը, տարաբարդաբար, շատ և շատ տակաւ են ծնանում Հայաստանի երկրի տակ:

Անս մի գործ, մի հարուստ նիւթ և մեր մատուցին. թող նա ևս աշխատէ իր արարքը կատարել: Տեսնենք, ինչ կանէ...

Գ. Խաղաթեանց

ՆԱԽԱԿ ԵՐԵՒԱՆԵՑ

3 մայիսի

Երևանի արևմտեան կողմը, Զանգու (Հրազդան) գետակի աջ ափից մի քանի վերտա հեռու, բարձրաւանդակի վրա, գտնուում է մի ընդարձակ այգեստան Կարմա անունով: Արա գոյութեանը Երևանցիները պարտական են Հուսէ յն-Խան-Արդարին, որի սկզբունքով և օգնութեամբ Զանգուից հանած առունը ջրով է բոլոր այգիները: Երևանի չըջկաններով պէտք է սակ, որ Կարմա գետին նշանաւոր է իր ունով և լաւ յատկութեամբ: Պատճառը հողի բարդութիւնն է, ուր կրային մասը մի մեծ պրոցնետ է կազմում: Տեղի դրութիւնը մասամբ օգնում է զինու լաւութեանը, որովհետեւ, ինչպէս յայտնի է, բարձրաւանդակ տեղերը աւելի լաւ ապագայ են խոտաւում գինու համար, քան թէ աւափարակ տեղերը:

Վերջին ժամանակներում, Կարմա գետն ալ արժանաւորութիւնից հրապարակած, երևանցիներից մի քանիսր մի այգիներին կից ամուլ հողեր վերցրին և սկսեցին նրանց վրա այգիներ զգել: Այդ այգիների թիւը այժմ հասնում է 25-30-ի, որոնց ամեն միւր մէկ-երկու խաղար տեղ է բունում: Հին այգիները, որոնց հողն հազ բաւակաւութիւն էր տալիս Զանգուից հանած առուն, մեծ կորուստ են ունենում, զրկվելով բուսականութեանը կեանք տուող ջրից, ամառայ սաստիկ չորերին: Այս հանգամանքը պատճառ դարձաւ, որ մի այգեատերերը զանգատ ներկայացրին այժմեան քաղաքացիական կազմակերպչական Կանգաւորի երեսցաւ, որ նոր-այգեատերերը իրանց հողերը ջրելու համար գրահարկով մարդիկ կանգնեցնելով առուի վրա, խլում են միւսներից հողերը: Երբ քաղաքացիները հարցնում է թէ ինչ կամ ում իրաւունքով նրանք հողեր են վերցրել և այգիներ անկել, պարտիկներից մէկը պատասխանում է. «Կանոնութեան օրէրում մեծն սարգար իր բարութեան և առատութեան շնորք ցոյց տալու համար, վաղուց արդէն թող էր տուել հող վերցնել Կարմում և մշակել, և մենք կարծում ենք, որ մեզ այժմ էլ արգելք չը պետք լինի այդ հողերից օգուտ քաղելու»: Կարծիքը չը կայ, որ թուրքը (պարսիկը) իր միակու պատասխանով ծիծաղէ յարուցանում, երբ մարդ մտածում է, որ մի օր և է խանի կամ սարգարի կամը օրէնք չէ կարող լինել ուսուսաց համար:

Պարոն քաղաքացիներ, անձամբ տեսնել ցանկաւաւորով այգիները, անցեալ օրը գնաց Կարմա մի քանի այգեատերերի հետ և հանդիպեցաւ, որ զբժուար է թող տալ նոր-այգեատերերին ջրելու իրանց հողերը, աչքի առաջ ունենալով ջրի պակասութիւնը և նոր այգիների ընդարձակ տարածութիւնը: Այս պատճառով պ. նախնապետիկ խորհրդակցութեամբ հրաման արձակվեցաւ, որ նոր այգեատերերը իրաւունք չը պէտք ունենան այսուհետեւ ջուր անելու իրանց համար: Եւ որպէս զի արժեք ապա-

ղալով կանայականութեամբ, կամ զաղտոնի կերպով գրովս իր տանն իրանց գործը, նշանակվեցան երկը կառավարիչներ, որոնք նախկին են առուի վրա և յայտնելու են իրանց նիւստարդիւնեան հետեւանքը քաղաքացիին իշխանութեանը:

Այն օրոյում, որ կայացրել են մեր քաղաքի բարձրատեսի մարտնչականները, բոլորովին անհամարատախան է մեր կարծիքին: Երևանի այն մի ծանր կլիմա ունեցող քաղաքի համար մեծ նշանակութիւն ունեն նորա չըջկայ այգիները: Բուսականութեան տուած օգուտը օղի վերաբերութեամբ յայտնի է ամենքին: Բայց ստանդից նոր-այգեատերերը բաւական վնասված կը լինեն, զրկվելով ինչպէս իրանց նորատուտի այգիներից, նոյպէս և սրանց վրա ծախսած գումարից: Այլի առաջ ունենալով այս հանդամանքները, մենք մի նուստա առաջարկութիւն ենք ուզում անել քաղաքացիին վարչութեանը, որ յարմար տուած ժամանակ կարող է փոխադարձաբար առաջարկել նոյնը մեր այգեատերերին:

Աւելի լաւ է, մեր կարծիքով, բոլոր այգեատերերի մէջ ստորագրութիւն բաց անել և ժողովել մի նշանաւոր գումար մեծացնելու համար Զանգուից հանած գետնափոր առուն, որ շատ տեղ տուենք իննստութիւն ունի: Մի 10 հազար ր. մեր կարծիքով, բաւականին մեծ գումար է առուից երկու անգամ ջուր դուրս բերելու համար: Նոր-այգեատերերին պատճիր համար, որ նրանք առանց կառավարութեան թողութեան ձեռնառուին են եղել հողերի մշակութեանը, կարելի է նրանցից երեք անգամ աւելի փող պահանջել, որպէս զի զգալի չը լինի մի այգեատերերը համար: Կարծում ենք, որ նոր այգեատերերը աւելի ուրախ կը լինեն մի այգեատի առաջարկութեանը, քան թէ կը ցանկանան զրկվել իրենանց այգիներից ու նրանց վրա արած ծանր աշխատութիւններից:

Իովհաննէս Հեթում

ՆԱԽԱԿ ԽՄԱՆԳՐԻՆ

Շահրութ, 15 ապրիլի

Կարդալով պատուական լրագրից մէջ «Արարատեան ընկերութեան» մասին Վասպուրականի մէջ ուսում ծառայելու նպատակաւ, ժամանակաւոր Շահրութ եկած զանազան վաճառականաց գործակալտար հայերն ի սրտէ աղոթութիւն ցանկանալով յիշեալ ընկերութեան, իրենց ազգասիրկ լուսան ձգում են աղաչելու զանձանակի մէջ նուիրելով քան երկու բարձր: Պ. Խոնազար, ինչոքում հասուցանել ուր հարկն է և պատուական լրագրից միջոցով հաստարակել նուիրատուների ներքոյն աղաչանուններն, խաչատուր Աղամանց 10 լուրը, Կասպար Աղամիրզայանց 2 ր., Կրկոյր Ահաւանի Պետրոսեանց 2 ր., Աւետիս Տէր-Մովսէսեանց 2 ր., Ինչկար Բաղդասարեանց 2 ր., Թովմաս Արեանց 2 ր., և ևս 2 ր.: Կուսարն է 22 ր. փաստի ծախքն վճարում է պ. Ոսկան խաչատրեանցն յիշեալ փողերն իւրազուրկ ևնց հասուցանելով:

Պարտութիւն Տէր-Պետրոսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր Համար 3 ման տօնի պատճառով տարաբանում չեն բանում, այդ պատճառով վաղը, մայիսի 11-ին, ուրբաթ օրը, չենք կարող հաստարակել մեր համարը, այլ «Մշակի» նետեալ համարը կը հրատարակենք յապաթ օր, մայիսի 12-ին:

Շնորհակալութեամբ ստացանք ՄՐԱԿԱՅԻՆՆԵՐԻՆ 1879 թիւն զէ գրի քէ կցից այի մասին հաստարակված մի բնօրինակ ուսուցիչ ընդունով, շնորհակալութեամբ ուսուցիչ պ. Ն. Պ. Նեչաւին է: Անս բնօրինակ վերնագիրը. «Дезинфекція, Н. П. Нежаева, преподавателя Химии.»—Москва, 1879 г. цѣна 20 к.: Ներկայից, որպէս զէ գրի քէ կցից այի ամենապարտական միջոց առաջարկում է, արտաբնօրինակ և անմարտութեան փոսերի համար իւր օրեւան կիր ծծ մը: Թիւ Ե. Նետ խառնած, ինչպարաններն օրը մարդուկ համար նա առաջարկում է իւր օրեւան ջրի կամ քաղցրի փոշիակալով (պուրվիւրազիւ): Այնպէս աների օղի մարդուկ ներկայի կարծիքով պէտք է կատարել ծծ միայն թըթուի պուրվիւրազիլ օգնութեամբ (сѣрнистая кислота): Շորերը և լուսացը զէ գրի քէ կցից այի ներկայից ամենապարտական միջոցը, Նեղիակի կարծիքով, խօրեան ջուրն է և քաղցրային ջուրը: Հեղինակը ներքում է կարծիքն ան թթուի նշանակութիւնը, որպէս զէ գրի քէ կցից այի միջոցի, փար

քանակութեամբ, առում է նա, այդ թթուն չէ աղղում, չէ ոչնչացնում օրգանական նիւթերն և արտադրութիւնների փառում, արձակելով միայն մի անոյսի հոտ, որ ժամանակաւորապէս չէզոքացնում է զարհատութիւնը, իսկ մեծ քանակութեամբ կարողան թթուն վնասակար կերպով է աղղում հնչատութեան վրա: Վերջուղն սպրան, որպէս մարդու միջոցի մասին, Նեղիակը առում է թէ կարելի է միայն չոր նիւթեր սպրել և ոչ թէ իրանց մէջ Նեղուկ պարունակող փառ նիւթեր, արտադրութիւններ և անմարտութիւններ, որովհետեւ այդպիսիները սպրվելով, ամբողջութեամբ չեն սպրվում, այլ սպրվում են միայն նիւթերի պինդ մասերը, իսկ Նեղուկը գործը խանալով լցնում է օդը վնասակար զարհատութիւններով:

Պ. Կանիէլ Վաղեանց խնդրում է մեզ յայտնել, որ նա չիսկ է Շուշանիկի արձանը և վիճակաւոր է զգում այդ արձանը: Պարտը խնդրում է վիճակաւորին ստորագրութիւններն հասցնել իրան տոմարների վճարը: Վիճակաւորը լինելու է պ. Բօղաբեանցի ծխախոտի խանութում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՅՐԱՆՈՒԱ

Պ. Նէրսիսի նախագահութեան ներքոյ մի յանձնաժողով է կազմվել, որի նպատակն է ժողովել բոլոր այն խնդիրները, որոնք ուղղված են կրկրականներին բարձրագոյն ուսումնարաններ հիմնելու մասին, այս պատճառով էլ մասնաժողովի կողմից վերջին ժամանակներս մի յայտարարութիւն է հրատարակվել, որի մէջ մասնաժողովը խնդրում է այն պարտններին, որոնք հակամիտ են բարձրագոյն ուսման ազատութեան գործին, ուղարկել յիշեալ ժողովին այն բոլոր խնդիրների պատճենները, որոնք ուղարկված են եղել կառավարութեան:

Կրկրական թերթերը առում են, որ աջակողմեան սենատորները ցանկութիւն են յայտնել խնդրատուութիւնների հարցը օրակարգի անոյնել, և խնդիրների ցուցակի վերաբերութեամբ հաշիւ պահանջել մինիստրութիւնից: Այս նպատակին հասնելու համար աջակողմեան սենատորները ոչինչ միջոց չեն ինստիտուտը ժողովում են լոյրը հարկաւոր եղած դոկումենտները: Ներքին պործերի մի նիստը կամեում է բաւակաւութիւն սուլ այս պահանջին, միայն նա խնդրում է, որ ուղղութիւն գործնելի ոչ թէ խնդիրների թիւի վրա, այլ ստորագրութեան ձևի վրա: Նա կամեում է այդ խնդիրների ձևի վրա մի առանձին ուղղութիւն գործնել, մասնաւոր նրա համար, որ հաստատ աղբիւրներից ապացուցված է, որ այդ խնդիրների ստորագրութիւնները եղել են ամենամեղանոս ու ամենամեղաղ կերպով, օրինակ ստորագրութիւնների մէջ մի և նոյն կլիմը ստորագրվում է իր ամուսնու, իր օրոյց և մի տաս, տասն ու հինգ էլ ուրիշ մտերիմ մարդու փոխարէն: 2ր նայելով բոլոր այս անկանստութիւններին, այնու ամենայնիւ հետեանքը շատ շնչին է, և զժուար թէ պատուելի սենատորները այսպիսի շնչին գործով կարողանան բան շինել:

Ժիրնոյի նախկին կուսակալը այս օրերս Ահաւ-Փուա քաղաքում մի ձուռ խօսեց խառն բազմութիւն բնուպարտականների յարկած ուղարկութեամբ լուս էին նրան. նա իր ձուռի մէջ յարձակվում էր պ. Ժիր-Ֆէրրիի առաջարկած նախագիծների դէմ: Նա իրան թող տուել մի քանի անոյսի լիշոցներ սուլ հանրապետութեանը, որի ջերմեանը պաշտպաններից մէկն էլ ինքն էր երբեմն: Ժիր-Ֆէրրիի նախագիծը դէմ եղած յարձակումներն ժամանակ, նա շատ շնչին փաստեր մէջ բերեց, բայց այնու ամենայնիւ Տուրուզի «Progresses liberaux» լրագրի նախկին գլխաւոր խմբագիրը, որ մի և նոյն ժամանակ կայսրութեան ամենամասնաւոր թէ շնամի էր, այժմ փո

խելով բոլոր իր քաղաքական համոզմունքները կարծում է թէ երկրի խաղաղութեան և նրա ստացալ բարօրութեան համար է խօսում, և մի քանի կրկրական լրագիրներ էլ հիանալով այդ փան (1) ձուռի մասին նրան հրատարակում են իրանց թերթերի մէջ:

Վերջին ժամանակներս, որովհետեւ ժողովների արձակուրդի պատճառով քաղաքական հարցերը փոքր ինչ զանազակցան, և Գրանկիի հարցն էլ մօլայից բնկաւ, լրագիրների մէջ սաստիկ շատ սուսուսուս լուրեր են երևում:

Պատմում են որ մի քանի վարդապետների յորհորանքով Ֆրանսիայում կանայք նոր խրեւիչներ են ներկայացնում ներքին գործերի մինիստրութեան, որպէս զի բարձրագոյն ուսման հարցը ազատ հրատարակվի, որպէս զի այդ առաքելի տիկիներն օրղխը ու ամուսինները բարեպաշտ և աստուածաւեր քաղաքացիներ լինեն...

ՆԱԽԱԿ ԹԻՐԻՔԻԱՅԻՆ

Կ. Պոլիս, 26 ապրիլի

Եզմիրլեան Արքայան Պատրիարքութեան փոխանորդութեան պաշտօնն ստանձնել է Վեր ազգային և ներքին գործերն յաջող և կանոնաւոր ընթացքի մէջ մասն. սրբազանք կը նախագահէ ազգային ժողովը, կը տնօրինէ գործերն զոհացուցիչ կերպով պատրիարք սրբազանի տերն ու համարումը կը վայելէ և իրենց մէջ կատարեալ համաձայնութիւն զույգած է. փոխանորդ սրբազանը յաճախ կը խորհրդակցէ պատրիարքի հետ և իրեն յատուկ խոհանութիւնէն բնաւ չը վիճարկէ: Սակայն Պատրիարքարանի արտաքին յարաբերութիւններն մեր փափագած վիճակն ունենալէ հետի են. բայց դա մեր պաշտօնից պակասութիւնն չէ. Կուսը տակաւին չը փառեալցոյց փոխանորդի ընտրութիւնը. մեր թերթերէն ունենք հրատարակելին թէ կառավարութիւնը հարգող է դրա Պատրիարքարանի թէ ինքն հայոց վարչական մարմիններու մէջ այսպիսի նոր փոփոխութիւն մը չը դրանելի, ուստի թող կամ պատրիարք մը ընտրեն կամ տեղապահ մը, կամ պատրիարքն իր հրաժարականն ետ առնու: Վեր ստուգելից Պատրիարքարանը որ այսպիսի ճաւուղացի մը չէ եկած, բայց այսու հանդերձ Կուսն այ կը զժամանակի Կատիճոս սրբազանը պաշտօնապէս ձանաչել, որովհետեւ կը հասկանայ թէ այս եղանակաւ ազգային բոլոր ներքին գործոց հոյն ու մատակարարութիւնը փոխանորդի վրա ճաշող պատրիարքն կարող պիտի լինի ապատրէն ազգային քաղաքական գործերովը գրազել, և բազմից հետ յարաբերութիւններն ընդարձակել, վերջուպէս բոլոր իր ժամանակն աշխատութիւններն ինքնավարութեան խնդրոյն զօհել: Արդ կարելի է որ օսանցիներն անտրժամադ տեսնին պատրիարքի և փոխանորդին այսպէս միաբան և միակողմնաբար ազգային իշխանութիւն բարձր վարելին: Հետեւաբար հարկ է խոնդոսներ յարուցանել, այս մասնաժողովում է, որ յետաձգած են պատասխան մը ուղղել աւ Պատրիարքարան, ուստի մեր արտաքին յարաբերութիւններն Գրան հետ, ինչպէս բարեք, կանոնաւոր չեն կրնար լինիլ: Սակայն կը կարծուի թէ կառավարութիւնը պիտի բերունէ թէ ուրիշ կերպ կարող չէ անել, բայց պարզապէս ձանաչել և ընդունել ինչ որ ազգային ժողովն որոշած է: 2ր հար չէ պատրիարքի խնդրոյն նկատմամբ ազգին կամացն հակառակ շարժել: Ամեն անգամ որ պատրիարքական խնդրոյ նկատմամբ կառավարութեան և ազգին մէջ զժուտութիւն ծագած է, միշտ ազգն է որ յաղթանակը տարած է:

Աւ սակայն Պատրիարքարանի և Գրան մէջ լուծելու այնքան կանոնա հարցեր կան, որ մեր յարաբերութիւններն պէտք է շուտով կանոնաւորելին: Այլ թուով ինչոյր, Տիգրանակերտի խնդր, Մշեցոյց խնդր, բարեկարգութեան խնդր, սուստորդներու հրաժարականի խնդր, որ մէկն անմ:

Գրաք. որ Ֆրանսիայի փանահայր Նիկողոս եպիսկոպոս մահուան փճիւռ ընդունած էր տեղական դատարաններու կողմ. փանահայրն բողոքեց այս փճոյն դէմ և խնդրեց որ անձամբ Հայկ պրիմայով իւր դատաստանն վերադառնէ քննութեան առնուի. Բ. Կուսը զգու

*) Նազարեանցի այս պատկերը, որպէս և նրա զիպի գլխաւոր, (ГЛУБОВАЯ ЖИЗНЬ) որ շատ կարեւոր է միջ պրանն ունենալու համար, մեր տարածաւոր երկրասարդ նկարիչ Վ. Սարգիսեանցի աշխատութիւններն են:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Վերջայ 1879 թի յուրիս սկզբից, տեղեկան թղթաբանար, թիֆլիսի մէջ հրատարակելու է ուսու «Кавказ» լրագրի շաբաթ, քաղաքա-գրականական շաբաթաթերթ «Աշխատանք» ուսու և հայ լեզուներով հետևեալ պրոգրամով:

- 1) Վաստատական ժամանակագրութիւն.
- 2) Տեղական կեանքի ուսումնասիրութիւն. թէ տնտեսական, թէ վիճակագրական ու թէ գիւղատնտեսական կողմերից:
- 3) Գրականութիւն. գիտութիւնների բոլոր ճիւղերի վերաբերութեամբ աշխատութիւններ, լինեն նրանք թարգմանութիւններ թէ ինքնուրոյնութիւններ: Վննադատութիւն ուսու, հայ և օտարազգի գրականութիւնների:
- 4) Վաղաքականութիւն. քաղաքական հայեացք և յօդուածներ միջազգային իրաւունքի հարցերի նկատմամբ:
- 5) Մանր լուրեր:
- 6) Մանաւոր յայտարարութիւններ:

«Աշխատանք» շաբաթաթերթի տարեկան բաժանորդագինը, թիֆլիսում, առանց տուն հասցենիւր.

Տուն հասցենիւր 5 ռուբլ. Ուսուից դանդան քաղաքներ զրկելով 5 ռ. 50 կ. փոստային գանձակցութեամբ զրկելով արտասահման 6 ռուբլ. Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:

«Աշխատանքի» համար բոլոր նշանակելի նամակագրութիւնները, ինչպէս նաև պահանջները, օտարազգաբարձից պիտի բարեհաճեն մինչև ուրիշ նոր յայտարարութիւն գուրու գալը ուղարկել ուղղակի «Աշխատանք» լրագրի խմբագրին այս հասցեով. Григорію Тер-Мелішсетову, редактору газеты «Трудъ», въ Сололавахъ, на Сололазской ул. у Вознесенской церкви возлѣ стараго моста въ Д. Михаила Галустова подлѣ № 110.

Վիճակը և անմշակ յօդուածներ «Աշխատանքի» խմբագրութիւնը ընդունում է մի միայն և յատկապէս ուսու, հայ, ֆրանսիական և վրացական լեզուներով: Խմբագիր-հրատարակող Վրիգոր Տէր-Մէլիշսեան:

Նրևանան հրատարակի փրա ՔԱՄԱՄԵՆԻ կարամանարայի դէմ ուղղված № 11. տան վերի յարում վարձով տրվում է մէկ ՊԱՀԱՆ Ժառայով, յու կարասիքով և առաւօտ-երեկոյ սամփարով: Դասիվը մի բայիցն ունի իր առաջ: Կինն է ամսական 40 ռուբլ: Բացի դասիվը մի և նոյն տանը վարձով տրվում են նոյնպէս առանձին ՍԵՆՆԱԿՆԵՐ կարասիքով, ծառայով, սամփարով և յուստորութեամբ: այդ սենակները ամսական արժէն 25, 20 և 15 ռուբլ: Այդ սենակներում կարելի է նոյնպէս ընկերով բնակվել: Հարցնել մի և նոյն տան դրան առաջ միզգ ծախայ ՌԱՄՈՎԻՆ:

ՄԻՐԱՅԻՆԻՆ ԿԼԱՄՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԴՈՒՐԱՐՈՒՄԻ ԻՄԱՆ ՕՐՈՒՐԱՐՈՒՄԻ ԻՄԱՆ ՄԷՋ ԳԱՆՎԱԾ Ն. Ա. ԴՕՍԱՐԱՅՎՈՒ «ՊԱՐՏԱՄՈՒՐՉԱԿՆԵՐԻ ԳՐԱՏԵՆԵԱԿԸ գրաւով և պարտամուրհակով **ՓՈՂ** է տալիս, գրնում է առևտրական **ՊԱՐՏԱԹՂԹԵՐ**, ծախում է ներքին փոխառութեան **ՏՈՄՍԱԿՆԵՐ** վճարը մաս մաս ստանալով, կատարում է գանազան **ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ**:

Մի և նոյն տեղը գանվում է **ԽՈՐՀՐԴԱԿՅԵԼՈՒ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԳՐԱՏԵՆԵԱԿԸ**, որտեղ կարելի է տեղեկութիւններ ստանալ **ՎԵՂԵՐԱՅԻՆ ՎԵՐԵՎԿԱՆ** և **ԼՈՒԵՏՐԿԱՆ** գործերի մասին: Գրասենեակը ընդունում է քաղաքային գործերի կատարումն իր ծախսերով, բրէական գործերի պաշտպանութիւն և ամեն տեսակ **ԳՐԵՒՈՐ ԵՇԽԵՏԵՆԵՐՆԵՐԻ ԿԵՏԵՐՈՒՄՆ**: Ի նկատի ունելով «ԳՐԵՍԵՆԵՆԵԿՆԵՐԻ» ունեցած չափազանց **ՇԼՏ** աշխատանքները ցանկացողները հրախրվում են **ԸՆԿԵՐԱՆԱԿ**: Յանկացողները պէտք է յայտնեն մինչև յուրիս 1-ը:

2-5

Ներսիսան հայոց Ազգային-հոգևոր դպրոցի աշակերտների տարեկան հարցաքննութիւնը լինելու է հետևեալ կարգաւ:

Ամիս և ամսաթիւ	Կասառուներ	Աւարկաներ
Մայիսի 2	Ե. Չ	Ուսաց լեզու
3	Ե. Չ	Հայոց լեզու
7	Ե. Չ	Ֆրանսիական լեզու
11	Ե. Չ	Քնդհանուր պատմութիւն
14	Ե. Չ	Աղբերքա և երկրաչափութիւն
15	Պատրաստականի 1 և 2 բաժանմունքները	Բոլոր աւարկաներից
16	Պատրաստականի 3 բաժանմունքը	Հայոց լեզու և թուարանութիւն
17	Պատրաստականի 3 բաժանմունքը	Մնացած աւարկաներից
18	Ե	Կրօն և Տօմար
22	Ե	Նկղեցական պատմութիւն
23	Ե	Մանկավարժութիւն
25	Ե	Ուսաց պատմութիւն
26	Ե	Կրօն և Աստուածաբանութիւն
28	Ե	Ֆիզիքա և բնագիտութիւն
30	Ե	Հայոց մատենագրութիւն
31	Ե	Հայոց պատմութիւն
Յունիսի 4	Ե	Աշխարհագրութիւն
5	Ե	Քնդհանուր մատենագրութիւն

I, II, III և IV դասատանց գրաւոր քննութիւնները լեզուներից և մատենագրային լինելու են I և II դասատանց մէջ մայիսի 22-ին և 23-ին իսկ III և IV դասատանց մէջ մայիսի 24-ին, 25-ին և 27-ին:

Հարցաքննութիւնը մինչև մայիսի 26-ը լինելու է զինի ծաշու 5½ ժամից և այնուհետև առաւօտները 8 ժամից: Իսկ պատրաստական դասատան քննութիւնները լինելու են Պաշտօնակատար տեսչի Արշակ Նահապետեանց:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ (ԱՐԹՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻՈՒՄ)

Վաճառում են հետևեալ հայերէն գրքերը՝	Բ. Կ.
1. Մինաս Չերազ՝ ԳՐԱՎԱՆ ՓՈՐՁԵՐ	1 —
2. — — ԱԶԳԱՅԻՆ ԳԱՏԵՐԱՐԱՎՈՒԹԻՒՆ	1 —
3. — — ԻՆՉ ՇԱՀԵՅԱՆԻ ԲԵՐԼԻՆԻ ՎԵՀԱԺ	40 —
4. — — ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԻՏԱԼԻԱ	60 —
5. Առաքելեան՝ ԳԵՈՐԳ ԻՈՒԼԼԵՍՈՆԻ (Թարգմ.)	60 —
6. ՍՈՒՆԳՈՒԿԱՆ ՊԵՊՈ կողմից 3 ար.	60 —
7. Բարթո՛ Երևանների առ իրենց ծնողք պարտ.	40 —
8. Տիգրանեան Տոմարակալութիւն (կազմած)	2 —
9. Կոստանեան՝ Հիւսուածք 3 հատոր	3 —
10. Պող և Վիրալիսէ, ոսկեկազմ, գրաբար	3 50 —

Շուտով լցու կը տեսնի Ազնարիւտի ԹԱԻԱՄԱԶ ՄԵՂՈՒ անունով գրքիւր, թարգմանութիւն օր. ՏԵՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆԻ, գեղեցիկ պատկերներով, զինը լինելու է 40 կ. գրքիւր արժանացել է առաջին ՊԱՐԳԵԻԻ Ֆրերէիան ընկերութեան. փաճառվելու է ԿԵՆՏ. ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ:

ՄԱՅԻՍԻ 10		Տ Ե Ղ Ե Կ Ա Ռ Ո Ւ Յ		Ք Ի Ֆ Ի Ւ Ս Ի Գ Ի Ն Ե Փ Յ Ի		Փ Օ Ս		Բ Ժ Շ Կ Ա Ն Ո Ց		«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԹԱՆՆԵՐ	
Ք Ի Ֆ Ի Ւ Ս Ի Գ Ի Ն Ե Փ Յ Ի	Ք Ի Ֆ Ի Ւ Ս Ի Գ Ի Ն Ե Փ Յ Ի	Ք Ի Ֆ Ի Ւ Ս Ի Գ Ի Ն Ե Փ Յ Ի	Ք Ի Ֆ Ի Ւ Ս Ի Գ Ի Ն Ե Փ Յ Ի	Ք Ի Ֆ Ի Ւ Ս Ի Գ Ի Ն Ե Փ Յ Ի	Ք Ի Ֆ Ի Ւ Ս Ի Գ Ի Ն Ե Փ Յ Ի	Ք Ի Ֆ Ի Ւ Ս Ի Գ Ի Ն Ե Փ Յ Ի	Ք Ի Ֆ Ի Ւ Ս Ի Գ Ի Ն Ե Փ Յ Ի	Ք Ի Ֆ Ի Ւ Ս Ի Գ Ի Ն Ե Փ Յ Ի	Ք Ի Ֆ Ի Ւ Ս Ի Գ Ի Ն Ե Փ Յ Ի	Ք Ի Ֆ Ի Ւ Ս Ի Գ Ի Ն Ե Փ Յ Ի	Ք Ի Ֆ Ի Ւ Ս Ի Գ Ի Ն Ե Փ Յ Ի
Ուսկի (պարտիզներու)	8 65	Կողմատի և Ան-գրկովկասի քաղաքները	1	Քիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների զննարկ) 9 ժամին 31 րոպէ առաւօտեան:	9.21	5.18	Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու. ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կեսօրից յետոյ 3 ժամից մինչև 7.	Հիւսուածքների ընդունելութիւնը ծանր 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ:	Նոյնը. Ս. Նամակը հետաքրքիր է, լինը սպիտակ:	—	
Հին 82 ար. մ. արծ. 1000 մ.	1500	Ռուսաստան	2	Մինչև Միխայիլով (խառն զննարկ) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ.	11.58	9.43	Մի և նոյն տեղը գանվում է «ԽՈՐՀՐԴԱԿՅԵԼՈՒ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԳՐԱՏԵՆԵԱԿԸ» որտեղ կարելի է տեղեկութիւններ ստանալ «ՎԵՂԵՐԱՅԻՆ ՎԵՐԵՎԿԱՆ» և «ԼՈՒԵՏՐԿԱՆ» գործերի մասին: Գրասենեակը ընդունում է քաղաքային գործերի կատարումն իր ծախսերով, բրէական գործերի պաշտպանութիւն և ամեն տեսակ «ԳՐԵՒՈՐ ԵՇԽԵՏԵՆԵՐՆԵՐԻ ԿԵՏԵՐՈՒՄՆ»: Ի նկատի ունելով «ԳՐԵՍԵՆԵՆԵԿՆԵՐԻ» ունեցած չափազանց ՇԼՏ աշխատանքները ցանկացողները հրախրվում են ԸՆԿԵՐԱՆԱԿ: Յանկացողները պէտք է յայտնեն մինչև յուրիս 1-ը:	Երկուշաբթի. Լիսի-ցեղ և Գորայիլի ներքին հիւանդութիւններ, Բուշարեանց վերաբուժական և կանանց հիւանդութիւններ:	—		
Հին 20 ար. 72 ար. 1000	1740	Աւարիա	3	Քիֆլիսից գալիս է առաջին զընարկը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 58 ր.	1.29	11.57	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	Երկուշաբթի. Վերմիլի և Կերպրի զննարկները, Քնդհանուր պատմութիւն, Քնդհանուր պատմութիւն և Միջազգային իրաւունքի հարցերի նկատմամբ:	—		
Վիգրիներ 50% առաջի փոխառութեան տու. 100	241	Անգլիա	4	Քիֆլիսից գալիս է առաջին զընարկը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 58 ր.	6.47		Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	—		
Երկրորդ 5% վիգրիներ	238	Գերմանիա	2	Քիֆլիսից գալիս է առաջին զընարկը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 58 ր.	9.40		Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	—		
Մարտի կուրսը 244	100	Ֆրանսիա	3	Քիֆլիսից գալիս է առաջին զընարկը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 58 ր.			Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	—		
Լեզուների կուրսը Օղեսայի վրա.	108 19	Յարմախ	3	Քիֆլիսից գալիս է առաջին զընարկը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 58 ր.			Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	—		
Վենայի կուրսը 113 գր.	100	Սենդկաշենների ընդունելութիւնը ծանր 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ:		Քիֆլիսից գալիս է առաջին զընարկը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 58 ր.			Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	—		
Կարբիի կուրսը.	5 65	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:		Քիֆլիսից գալիս է առաջին զընարկը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 58 ր.			Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	—		
Աւարական բանկի ակցիան 200 մ.	320	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:		Քիֆլիսից գալիս է առաջին զընարկը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 58 ր.			Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	—		
Փոթի Քիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:		Քիֆլիսից գալիս է առաջին զընարկը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 58 ր.			Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	—		
Շաքարը քրոզի.	7 40	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:		Քիֆլիսից գալիս է առաջին զընարկը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 58 ր.			Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	—		
միւս տեսակը.	7 80	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:		Քիֆլիսից գալիս է առաջին զընարկը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 58 ր.			Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	—		
շաքար աւազը.	5 60	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:		Քիֆլիսից գալիս է առաջին զընարկը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 58 ր.			Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	—		
արանդիար.	5 80	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:		Քիֆլիսից գալիս է առաջին զընարկը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 58 ր.			Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	—		
աւազը վճարած.	12 50	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:		Քիֆլիսից գալիս է առաջին զընարկը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 58 ր.			Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	—		
Բ. և Երազը Երևանու Ամերիկայի սերմից.	7 80	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:		Քիֆլիսից գալիս է առաջին զընարկը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 58 ր.			Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	—		
Միւս տեսակը Հին սերմից.	7	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:		Քիֆլիսից գալիս է առաջին զընարկը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 58 ր.			Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	—		
Բուրդը Բուշի.	7 50	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:		Քիֆլիսից գալիս է առաջին զընարկը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 58 ր.			Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	—		
Թարաքամի.	4 20	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:		Քիֆլիսից գալիս է առաջին զընարկը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 58 ր.			Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	Ստորագրութիւնը ընդունվում է թիֆլիսի Կենտրոնական գրամատչանոցում:	—		
Ալիւրը Շորագալու.	1 70	Ստորագրութիւնը ընդունվում է թի									